

ԵՅՈՒՄ ԲԱՐՁՐՈՒՄ

ԱՊԱՏԱՐԱՐ ԱՐԻԿԸ



891.995

թ-33

ԳԵՂԱՐԱՑ

ՀԱԿԵՍ ԿՈ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937

891.99 L⁹³

30 MAY 1911

P-33

ԱՐ

ԱԶԱՏԱՐԱՐ ԱՉԻԿԸ

Կապույտ յերկնքից ժպտում եր փայլուն արել: Նա իր տաք ճառագայթները փռում եր դաշտերի, պարտեզների վրա ու շշնջում.

— Զարթնեք, զարթնեք: Յելեք, յելեք, զարնանամուտ ե արդեն...


Ծաղկեցին ծաղիկները պես-պես: Խոսոցեցին ջրերն ուրախ: Պարի յելան թիթեռնիկները թեթև ու ծլվլացին թռչունները գույնդգույն:

Այնպես կանաչ, այնպես նախշուն եր զարունը:

Այնպես հնչուն, այնպես զվարթ եր զարունը:

* *

Աչիկը տիկնիկին նստեցըել եր փայտից շինած կառքի մեջ ու մոր առաջն ընկած քաշում, վազվզում եր անտառում:



ՀԱՅ 1116-ԾՈՒՑ



— Զգնւյշ, ցեխերի մեջ չմտնես, տու-
տիկներդ չթրջես։ Տոտիկներդ վոր
թրջես, վորիկդ կցավի. — ասում եր
մայրը։

— Զե, չե, մամա ջան, դու մի վա-
խենա, յես հո պուճուր չեմ, յես հո պու-
ճուր չեմ, վոր ասում ես...

Նա դեռ խոսքը չեր վերջացրել, յերբ
մայրը նորից զգուշացրեց։

— Սպասիր, այնտեղ առվակ կա, ջը-
րերը վարարել են, ճանապարհը փա-
կել, մեջը չընկնես։

— Վոր ընկնեմ, ի՞նչ կլինի, — զարմա-
ցած հարցը Աշիկը։

— Կխեղդիես։

— Վոր խեղդիեմ, ի՞նչ կլինի։

— Քո մաման կմնա առանց Աշիկի...
Լաց կլինի քո մաման, առանց սիրուն
Աշիկի... բա մաման մեղք չի՞։

Աշիկն զգացված գրկեց մորը։

— Եղ թնչպես ե լինում, վոր խեղդ-
կում են, մամա։



— Զուրը լցվում ե բերանը, ել ող չի
լինում, վոր շնչեն, թպրտում են, թը-
պրտում ու մեռնում:

Աչիկը վախեցած բռնեց մոր ձեռքը
և զգույշ քայլում եր նրա կողքով.

Նա չի ուզում խեղդվել...

* * *

Յերբ նրանք տուն յեկան, մայրն
իսկույն գնաց խոհանոց՝ ճաշի պատ-
րաստություն տեսնելու, իսկ Աչիկը
սենյակ մտավ՝ իր տիկնիկին քնեցնե-
լու,

— Քո մաման եսոր շատ ե հոգնել,—
ասաց Աչիկը, քո մաման եսոր չի կա-
րող քեզ որոր ասել, սուս ու փուս
աչիկներդ փակիր ու քնիր:

Մեկ ել նա նայեց աթուին ու զար-
մացած բացականչեց:

— Վայ, ես ի՞նչ ե...

Նոյա յեղբայրը գետակից մի ձկնիկ
եր բռնել, զցել ջրով լիքն ամանի մեջ

ու ինքը զնացել դպրոց։ Զկնիկը խըլտ-
ոյըլտում եր ջրի մեջ։

Աշիկն առաջին անգամն եր կենդա-
նի ձուկ տեսնում։ Նա կարծեց, թե
ձուկը պատահմամբ ե ընկեր ջրի մեջ
և մտածեց, թե հիմա կխեղզվի։ Հե՞ վոր
մայրիկն ասում եր՝ «վոր ջրի մեջ ընկ-
նես, կխեղզվես»։ Նա մտածեց ազատել
խեղճ ձկանը։

— Թպրտում ես, դու թպրտում ես.
ուրեմն դու խեղզվում ես։ — Քո մաման
քեզ չի ասել, վոր չի կարելի ջրին
մոտենալ... Բա ինչու չլսեցիր քո մա-
մային։ Դե լավ, յես քեզ կաղատեմ,
մի վախենա, — ասաց Աշիկն ու ձուկը
հանեց ջրի միջից։

Չուկը թպրտաց նրա ձեռքերի մեջ,
դուրս պրծավ ու ընկավ հատակին։

— Սիս դու, հիմար, ախ դու, հիմար,
ինչու յես վախենում, յես հո գաղան
չեմ, — ասաց Աշիկն ու հատակից վերց-
ըց ձուկը։

— Ո՞, դու թաց ես, ձկնիկ ջան, դու
սառել ես, վնաց ես դողդողում... — շա-
րունակեց Աշիկը։ — Քո մաման քեզ չի
ասել, վոր չի կարելի տոտիկները թրը-
ջել։ Տոտիկներդ վոր թրջես, փորիկդ
կցավի։ Հը, չի ասել... Բայց վորտեղ
են քո տոտիկները Վայ, տոտիկներ չու-
նես, յերեխ ջուրն ե տարել...»

Այդ մտքից նա այնպես տիրեց, վոր
մինչև անգամ թրջվեցին աչքերը, սա-
կայն լալու ժամանակ չեր։

Նա իսկույն չորացրեց ձկնիկին,
ծալ-ծալ փաթաթեց տիկնիկի շորերի
մեջ և ասաց։

— Դու կլավանաս, կտաքանամ՝ կը-
լավանաս, քո փորիկն ել չի ցավի։

Պատասխանի փոխարեն ձուկը լայն-
լայն բացում եր ցամաքած բերանը։

— Յես հիմա քեզ կպառկեցնեմ, լավ-
լավ կծածկեմ, յես չեմ թողնի, վոր
մեռնես, — վոգեորված խոսում եր Ա-
շիկը։ — Դու վոր մեռնես, քո մաման



կմնա առանց բալիկի, նա լաց կլինի
քեզ համար. բա մեղքը չի քո մաման:

Չուկն առաջվա պես ել չեր թպըր-
տում... Միայն մեկ-մեկ պոչն եր
շարժում և մշուշոտ աչքերով նայում
Աչիկին:

— Ի՞նչ ես ուզում, որոր ես ուզում,
հիմա, հիմա. — աշխայժ վրա տվեց
Աչիկը:


Նա անկողնից հանեց տիկնիկին,
ասաց.

— Դու առողջ ես, նստած ել կարող
ես քնել:

Նրա տեղը պառկեցրեց բարուրած
ձկնիկին ու սկսեց յերգել:

— Քնիր, քնիր, իմ նախշուն բալիկ,
քնիր, վոր մեծանաս, վոր մեծանաս,
խելոքանաս, ել չես խաղա ջրի հետ,
ել չես ընկնի ջրի մեջ... Սմեն անգամ
յես հո կողքիդ չեմ լինի, վոր քեզ ա-
զատեմ:

Չուկն այս անգամ հաղիկ-հազ թպըր-
տաց ու... ու փակեց աչքերը...



Յերբ նա փակեց աչքերը, Աշխիկը վոստոստաց ուրախությունից:

— Ասում եյի, ախր ասում եյի, վորչոր անկողնում դու շուտ կքննես:

Այդ ըոսպեյին մլավելով պատուհանից ներս ցատկեց փիսիկը. Նա արևի տակ լավ տաքացել եր, քնել, այժմ ելուզում եր խաղալ Աշխիկի հետ. Բայց Աշխիկը փոխանակ սովորականի պես առաջ վագելու, մատը դըեց շրթունքներին ու շշնջաց.

— Սը՞րը՞սսս... սըը՞սս... Զե՞ս տեսնում, քնել ե իմ ձկնիկը, կամաց արի, վոտքի ծայրերի վրա արի, չզարթնի...

Փիսիկը մոտեցավ, հանկարծ քիթը ցցեց, սկսեց հոտոտալ...

Աշխիկն այնպես ուրախ եր, այնպես ուրախ... Նա ուզում եր վազել կանչել րնկերուհիներին, թող նրանք ել տեսնեն կենդանի ձկնիկին, թող նրանք

Ել իմանան, թե ինչպես Աչիկը խեղդ-
վելուց փրկել եք ձկնիկին... Բայց բնչ-
պես մենակ ժողովուն քնածին, յեթե
հանկարծ մահճակալից ընկնի ցած:

Նա փիսիկին հիշելով ասաց:


— Դո՛ւ, փիսո ջան, կնստես ձկնիկի
մոտ, կինես պահապան, յես շուտով
կգամ: Դու լավ կնայես, վոր ցած չընկ-
նի, չբացվի:

Փիսիկը մռուաց, մեկ նայեց Աչիկին,
մեկ ձկնիկին ու ելի մռուաց:

Աչիկը փիսիկին ձկնիկի մոտ թող-
նելով՝ շտապ դուրս յեկավ սենյակից
ու պատշգամքից կանչեց թուշիկին,
Պաշիկին, ելի մի քանի ընկերների:

— Շուտ, շուտ յեկեք, ձեզ ենպես
բան ցույց տամ, վոր...

Բայց յերբ նրանք աղմուկով ներս
թափվեցին, սենյակում վոչ ձուկ կար,
վոչ կատու...



Խմբագիր՝ Հ. Հարուրյունյան
Տեխն. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Արքագրի՝ Ա. Մրգանյան

ՀՀ Ազգային գրադարան



NL0399517

Գլավվատի լիազոր Ա.-1197, Հրատարակչ. 3931
Պատկեր 1354. Տիրաժ 4000
Գետերատի տպարան, Եկեղեցան, Ա Կոտոնյանցի, 4

ԳԻՒԸ 80 ԿՈՊ.

803

8649

ЛЮСИ ТАРГЮЛЬ
СПАСИТЕЛЬНИЦА АЧИК

Гиз ССР Армении, Ереван, 1937 г.